«ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ
Հ.124 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ուստարի

ԴԱՍԱՐԱՆ՝ II[ա]

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մ.Հակոբյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մշտական ուշադրության կենտրոնում պահել դասարանի վարքի և ուսման առաջադիմության հետ կապված խնդիրները:Աշակերտների մոտ զարգացնել արդեն իսկ ձևավորված բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն,մաքրություն,անձնական հիգիենա,համագործակցություն,փոխօգնություն) ,ներշնչել և զարգացնել հավատ սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ:Սերտ կապի մեջ լինել ծնողների հետ,ինչը կնպաստի աշակերտների թե՛ վարքի,թե՛ ուսման առաջադիմության բարձրացմանը:

2.ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ,որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի ազգային ավանդույթներին և հոգևոր արժեքներին:

3.ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ:Այդ նպատակով զրույցի միջոցով նրանց հաղորդել տեղեկատվություն մարդկանց կյանքում գեղեցիկի դերի մասին,ինչպես նաև ընձեռել հնարավորություն ինքնարտահայտվելու:

4.ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի,ակնածանք հայ ազատամարտիկների և ֆիդայիների նկատմամբ:Ծանոթացնել հայ ազատամարտիկների կյանքի պատմությանը,քննարկել՝ երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով բնավորության այնպիսի գծերի վրա,որտեղ ակներև է հայրենասիրությունը:

5.ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպաստել երեխաների ֆիզիկական պատրաստվածության զարգացմանը,բացատրել մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով կոփելու կարևորությունը,ինչպես նաև նպաստել վնասակար սովորություններից զերծ մնալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

6.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամաբ,ձևավորել և զարգացնել աշխատանքային հմտությունները և կառուցողական մոտեցումը:Աշխատանքը աշակերտի կողմից պետք է դիտարկվի որպես կյանքի և գոյատևման աղբյուր:

7.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցի միջոցով երեխաների մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամաբ:Ներկայացնել բնապահպանական խնդիրներ,նշել դրանց վտանգավորության և բնության պահպանման կարևորության մասին:

8.ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դպրոց – ընտանիք սերտ կապը նպաստում է երեխաների ավելի լավ սովորելուն,իսկ

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
I	Կազմակերպչական հարցերի քննարկում	1.09 – 3.09	
II	Դասագրքերի, գրենական պիտույքների ստուգում	5.09 – 8.09	
III	Գիտելիքի դերը մարդու կյանքում	12.09-16.09	
IV	Մենք Հայկի թոռնիկներն ենք՝ անկախ Հայաստանի ապագան	19.09-23.10	
V	Տոնդ շնորհավո՛ր,սիրելի՛ ուսուցիչ	26.09 -5.10	
VI	Երևանն իմ տունն է	10.10-14.10	
VII	Անձնական հիգիենա.առողջ հոգի առողջ մարմնում	17.10-21.10	
VIII	Վարքի կանոններ.քաղաքավարության և խոսքի կուլտուրայի պահպանում:	7.11 – 11.11	
IX	Իմ դերը ընտանիքում	14.11-18.11	
X	Ինչպես ապահովել անվտանգ երթևեկություն	21.11-25.11	
XI	Բնության պահպանության կարևորությունը մարդկանց կյանքում	28.11-2.12	
XII	Անվտանգության կանոնների պահպանումը երկրաշարժի ժամանակ	5.12-9.12	
XIII	Հանդուրժողականությունը և ներելու կարողությունը որպես մարդկային հարաբերությունների նախասկիզբ	12.12-16.12	
XIV	Ամենաբարի ամանորը	19.12-23.12	
XV	Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	23.01-31.01	
XVI	Իմ իրավունքներն ու պարտականությունները	1.02 – 3.02	
XVII	Ինչ է ազնվությունը	6.02-10.02	
XVIII	Քաղաքավարությունը՝ մարդու կարևոր	13.02-17.02	

XIX	Ոսկեղենիկ հայոց լեզու Գրքերը մեր կյանքում	20.02-24.02	
XX	Բարությունը կփրկի աշխարհը	27.02 – 28.02	
XXI	Դռները բացե՛ք,գարուն է գալիս	1.03-4.03	
XXII	Իմ մայրիկը վառ գարուն է	6.03-10.03	
XXIII	Կարգապահության կարևորությունը	13.03 – 17.03	
XXIV	Ինչ եմ ուզում դառնալ	20.03-24.03	
XXV	Ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը	3.04-7.04	
XXVI	Ինչպես պետք է մեզ պահենք հասարակական վայրերում	10.04 – 14.04	
XXVII	Ով է իսկական ընկերը	17.04-21.04	
XXVIII	Զրույց նվիրված Ցեղասպանության զոհերի հիշատակին	25.04-28.04	
XXIX	Ինչպես պայքարել վատ սովորությունների դեմ	1.05-5.05	
XXX	Հաղթանակած մայիս	8.05-12.05	
XXXI	Մարդու գործն անմահ է	15.05-19.05	
XXXII	Ես փոխադրվում եմ երրորդ դասարան	22.05 25.05	